Հաստատում եմ

Տնօրեն՝ Ա. Թունյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Վայոց ձորի մարզի Գնդեվազ գյուղի

միջնակարգ դպրոցի

11-րդ դասարանի դասղեկ

Արմինե Վաչագանի Միերյան

« 2023-2024 » ուսումնական տարի

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ(դասարանի ընդհանուր բնութագիրը) Դասարանը բաղկացած է չորս հոգուց: Ընդհանուր առմամբ աշակերտները ունեն լավ ընդունակություններ: Կան լավ սովորող աշակերտներ: Դասարանում բոլոր աշակերտները համախմբված են: Դասարանի աշակերտների սոցիալական վիճակը գնահատվում է լավ: Երեխաները հաճախում են դպրոց ճիշտ ժամանակին և ցուցաբերում են ակտիվություն:

Դասարանում չկան դժվար դաստիարակվող աշակերտներ: Հիմնականում բոլորն էլ խելացի են, կազմակերպված:Ակտիվ մասնակցում են ներդասարանական և համադպրոցականմիջոցառումներին:

2. Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում Ուսումնա-դաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը: Դասից և վարքից անբավարար աշակերտների հետ աշխատել առանձին , որպեսզի շտկել այդ թերությունները: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն) :

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:

3.2 Գեղագիտական դաստիարակություն Ֆիլմերի միջոցով ցուցադրել և բացատրել թե գեղեցիկը ինչ դեր ունի ներկայիս կյանքում: Բացի այդ լսել աշակերտների կարծիքը այդ նյութի վերաբերյալ: Կյանքից բերել օրինակներ և ձևավորել գեղագիտական ճաշակ:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն Հայրենասիրության կրթության վերաբերյալ կազմակերպել քննարկումներ : Նշել մի շարք ֆիդայիների անուներ և թվարկել այն բնավորության գծերը, որտեղ ակներև է հայրենասիրությունը և ռազմարվեստ ձևերը:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն Դասապրոցեսին պետք է ցուցաբերոլ ակտիվություն : Բացատրել և պահանջել , որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը: Կոփեն իրենց մարմինները ֆիզվարժությունների և հնարների միջոցով:

3.5 Աշխատանքային դաստիարակություն Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը: Տալ աշակերտներին այն գաղափարը , որ կարողանա գոյատևել ներկայիս դժվար պայմաններում:

3.6 Բնապահպանական դաստիարակություն Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ , որոնք առկա են իրենց շրջապատում և այդ խնդիրը գլոբալ է:

4. Դպրոց-ընտանիք կապը Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն , որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց ընտանիք կապը, որպեսի աշակերտները ավելի լավ սովորեն:

Ամիսը	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Նշումներ
Սեպտեմբեր	Դասագրքերի բաշխում	
	Դասարանում հերթապահության ժամանակագրության կազմում և վերահսկում	
	Ծնողական ժողովի հրավիրում 1. Ծնողական խորհրդի կազմի ընտրություն 2. Կորոնավիրուսային հիվանդության պայմաններում ուսուցման գործընթացի կազմակերպում:	
	Դասարանական ակտիվի ընտրություն	
	Դասղեկի ժամի վարում, պլանավորված զրույցների անցկացում	
Հոկտեմբեր	Դասալսումներ տարբեր առարկաներից։ Համագործակցություն դասավանդող ուսուցիչների հետ	
	Աշխատանքներ ուսման մեջ թերացող աշակերտների հետ	
	Դասղեկի ժամի վարում, պլանավորված զրույցների անցկացում	
	Հետևել աշակերտների առաջադիմությանը, զրուցել նրանց ծնողների հետ	
	Աշակերտների սանիտարահիգիենիկ վիճակի ստուգում	
	Ծնողական ժողովի հրավիրում	
Նոյեմբեր	Աշխատանք հաճախակի ուշացող և բացակա աշակերտների հետ	
	Ստեղծել փոխադարձ հարգանք միմյանց նկատմամբ	
	Խնդրահարույց աշակերտների հետ անհատական աշխատանքների կազմակերպում	
	Դասղեկի ժամի վարում, պլանավորված զրույցների անցկացում	
	Ծնողական ժողովի հրավիրում	
Դեկտեմբեր	Դասալսումներ բոլոր առարկաներից:	
	Համագործակցություն դասավանդող ուսուցիչների հետ	
	Արտակարգ իրավիճակների ժամանակ աշակերտների համատասխան գործողությունների դրսևորման ուսուցում	
	Տեղեկացում ծնողներին իրենց երեխաների ստացած գնահատականների մասին	
	Զրույց հանդուրժողականության և քաղաքավարություն թեմայով	
	Դասղեկի ժամի վարում, պլանավորված զրույցների անցկացում	
Հունվար	Ծնողական ժողովի հրավիրում	
	Ծանոթացում ազգային հերոսների հետ	
	Կարգապահական կանոնների վերահսկում	
	Դասղեկի ժամի վարում, պլանավորված զրույցների անցկացում	
Փետրվար	Ձևավորել համերաշխ աշակերտական կոլեկտիվ	
	Զրույց<< Հայ մեծ գրող Հովհաննես Թումանյանը>> թեմայով	
	Աշխատանք ետ մնացող աշակերտների հետ	
Մարտ	Դաստիարակչական աշխատանք կատարել դասարանի սովորողների շրջանում՝ սերտորեն համագործակցելով	

	մյուս մանկավարժական աշխատողների հետ	
	Ակտիվորեն մասնակցել դպրոցի հասարակական աշխատանքներին	
	Ապահովել աշակերտ - դպրոց – ծնող սերտ կապը, նպաստել դպրոցի և ընտանիքի մանկավարժական միասնական պահանջների ապահովմանը սովորողների նկատմամբ	
	Դասղեկի ժամի վարում, պլանավորված զրույցների անցկացում	
Ապրիլ	Հետևել աշակերտների առաջադիմությանը, զրուցել նրանց ծնողների հետ	
	Դասալսումներ բոլոր առարկաներից	
	Զրուցել դասավանդող ուսուցիչների հետ աշակերտների վարքի և առաջադիմության մասին	
	Դասղեկի ժամի վարում, պլանավորված զրույցների անցկացում	
	Ստուգել դասագրքերի և տետրերի առկայությունը ըստ դասացուցակի	
Մայիս	Հետևել աշակերտների անձնական հիգիենային	
	Կազմակերպել դասարանին հատկացված դպրոցամերձ տարածքի մաքրումը	
	Դասղեկի ժամի վարում, պլանավորված զրույցների անցկացում	
	Կազմակերպել ուումանադաստիարակչական, գիտաճանաչողական, ժամանցային էքսկուրսիաներ	
	Համագործակցություն դասավանդող ուսուցիչների հետ	
	Կիսամյակի ամփոփում	
	Դասագրքերի հանձնում	
	Ծնողական ժողովի կազմակերպում	

Դասղեկի ժամի թեմատիկա

1.	Նախորդ ուստարվա արդյունքների վերլուծում, նոր ուստարվա անելիքների ծրագրում
2.	Մասնագիտություններ, որոնք ընտրում ենք
3.	Ով չի սիրում իր երկիրը,ոչինչ սիրել չի կարող
4.	Մերօրյա հերոսները
5.	Պետություն, ազգ, բանակ
6.	Ինչ է պետք հզոր հայրենիք ստեղծելու համար
7.	Ինչպես պայքարել անտարբերության դեմ
8.	Միասնությունը տանում է դեպի հզոր հայրենիք
9.	Մարդիկ,որոնց շնորհիվ մենք ապրում ենք
10.	Ուսուցիչ,որին ես շնորհակալ եմ այն բանի համար,որ նա…
11.	Արգելված թեմաներ թերթերի համար
12.	Արտագաղթը չարիք է
13	Դիմացինին լսելու կուլտուրա
14.	Իմ երկիրը երեկ, այսօր և վաղը
15.	Առաջին կիսամյակի ուսումնական արդյունքների վերլուծություն
16.	Հայրենիքիս ապագա զինվորն եմ
17.	Հայոց բանակ
18.	Բարոյական արժեքներ. իմաստություն և բարեպաշտություն
19.	Սերը վեհ զգացողություն է
20.	Առողջ ապրելակերպի կուլտուրա
21.	Գռեհիկ սովորույթներ՝ ալկոհոլ և թմրամոլություն
22.	Ինչ գիտեմ առողջության մասին
23.	Հիգիենեային վերաբերվող հարցեր
24.	Մարդու ինքնուրույնությունը: Ինչպես է այն արտահայտվում
25.	Դպրոցական օրերի ուրախություններն ու դժվարությունները
26.	Հետաքրքիր տեղեկություններ, փաստեր
27.	45 րոպե աշխարհի շուրջ
28.	Իսկ միգուցե մոլորակն ուզում է հանգստանալ, նա հոգնել է մարդկանց անվերջ քառսից
29.	Ցեղասպանությունը մեծ ոճիր է
30.	Ինչ է աշխարհաքաղաքականությունը
31.	Ինչպես հաղթահարել ծուլությունը
32.	Իմ երազանքներն ու նպատակները
33.	Մարդիկ, որոնց քաջությունը ցնցել է ողջ աշխարհը
34.	2-րդ կիսամյակի ամփոփում